# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | կիսավերարկու | կիսավերարկու | կիսավերարկու | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Մուգ կապույտ Dark Navy Blue (սև երանգին մոտ), #000120 Color Hex գույնի, անջրանցիկ 100% նեյլոն կտորից, տեսակարար կշիռը՝ 140 գ/մ2, ±3%: Անհրաժեշտության դեպքում մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, որը տրվում է կտորը արտադրողի կողմից: Կտորի ներսի կողմից մեմբրանե ծածկույթով, օձիքը կանգուն, հանովի ներդիրով: Օձիքը երկակի է, ներսում շղթայի տակ նախատեսված է գլխարկ: Գլխարկը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ունի կարգավորիչ, կպչուն ժապավեն: Օձիքի մեջտեղում ներկարված է կախիչ: Թիկունքը բաղկացած է 3 մասից, վերևի մասում հորիզոնական՝ YKK որոկի պլաստմասե շղթայով փակվող ներկարված գրպան: Առաջամասը բաղկացած է 4 մասից, 2-րդ մասի ձախ կողմում կարվում է 38մմ երկարությամբ օղակ՝ տեսախցիկի համար և կրծքանշանի ներդիր, իսկ աջ կողմի 2-րդ մասում կարվում է 35մմ երկարությամբ օղակ՝ ռադիոկայանի խոսափողի համար: 3-րդ մասի աջ և ձախ կողմերում հորիզոնական գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով և YKK որոկի պլաստմասե շղթայով փակվող, ինչպես նաև աջ և ձախ կողմերի կենտրոնական մասում ուղղահայաց գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով, 4-րդ մասի աջ և ձախ կողմերում թեք գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով և YKK որոկի պլաստմասե շղթայով փակվող: Դիմացից ամբողջական կափույրով ներկարված YKK որոկի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | պլաստմասե շղթայով և կոճգամներով: Կողային և կրծքային գրպանները՝ կայծակաճարմանդով: Կիսավերարկուն կողքերից ներքևի մասում անջատվում է շղթայով, որի վրա կան կարգավորիչներ: Թևքերի ծայրերին ներկարված են էլաստիկ ժապավեններ՝ կարգավորող կպչունակով: Գոտին կարված է կիսավերարկուին, որի մեջ մշակված է էլաստիկ ժապավեն: Կիսավերարկուն ներսից՝ ներդիրի ձախ կրծքամասի հատվածում ունի ուղղահայաց գրպան: Ընդարձակ կտրվածք՝ շարժունակությունն ապահովելու համար: Ներդիրը մուգ կապույտ գույնի ֆլիս կտորից, ամբողջությամբ առանձնանում է YKK որոկի պլաստմասե շղթայով, որի վրա կարված է փիսկոզից աստառ: Ներդիրի թևքերը ներսից նույնպես առանձնանում են YKK որոկի պլաստմասե շղթայով: Թիկունքի վերևի մասի գաղտնի գրպանի կտորի վրա կարվում է լուսանդրադարձնող «POLICE», իսկ աջ կրծքամասում «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կարվում է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության թևքանշան: Ուսադիրները կարվում են նույն կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Ուսադիրները օձիքի մասում կոճկվում են մուգ կապույտ պլաստմասե կոճգամով, իսկ ուսերի մասում կարված են: Կիսավերարկուն պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը և լվանալու պայմանները: Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Փաթեթավորումը` տեսականին 3 հատ` պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1 հատ: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |